14087

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
«18» 12 2024 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 284 - 24

Նախաձեռնող՝ *«ՄԱՎ ՇԻՆ» ՍՊԸ*
Վայոց ձորի մարզ, գ. Զառիթափ

Գործունեությունը՝ *Արենի համայնքի Արփի բնակավայրում կրթահամալիրի կառուցում*
Վայոց ձորի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 284 - 24

«18» դեկտեմբերի 2024 թ.

Արենի համայնքի Արփի բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՄԱՎ ՇԻՆ» ՍՊԸ
Փաստաթղթերի փաթեթ՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, Արփի բնակավայր

Ներածական մաս. Կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրի շրջանակներում «Մավ շին» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է կրթահամալիրի կառուցում Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արփի բնակավայրում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է: Կրթահամալիրի կառուցապատման համար նախատեսված հողամասը զբաղեցնում է 2,21 հա մակերես: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման: Կրթահամալիրի կառուցման նախագիծը կազմվել է 2024 թվականի մայիսի 16-ին Արենիի համայնքապետարանի կողմից տրված N 131 նախագծման թույլտվության պահանջներին համապատասխան:

Նկարագրական մաս. Նոր կրթահամալիրը նախատեսվում է կառուցել Արփի բնակավայրի 1-ին փողոցի 21 շենք հասցեում: Արփի բնակավայրի դպրոցի գոյություն ունեցող երեք մասնաշենքերից երկուսը նախատեսվում է քանդել: Ապամոնտաժվող մասնաշենքերի համար տեղադրվելու է մետաղաթիթեղից ժամանակավոր ցանկապատ 2 մ բարձրությամբ և 5 մ լայնությամբ դարպաս: Դպրոցը բաղկացած է երեք մասնաշենքերից՝ ճաշարանից և երկու երկհարկանի ուսումնական մասնաշենքերից: Մասնաշենքերի տանիքները քառաթև են, տանիքածածկերը մետաղաթիթեղներից են փայտե կոնստրուկցիաների վրա, ծածկերը հավաքովի երկաթ-բետոնե սալերից, պատերը՝ քարից, միջնորմները՝ 100 մմ հաստությամբ պեմզաբլոկներից: Ապամոնտաժման և քանդման աշխատանքները կատարվելու են փուլերով:

1-ի փուլում ապամոնտաժվելու են ճաշարանի և ուսումնական 2-րդ մասնաշենքի բոլոր ճաղաշարերը, դուռ պատուհանները, ներսի սարքավորումները, կախովի առաստաղները և ներսը մաքրվելու է կենցաղային ու շինարարական աղբից:

2-րդ փուլում պատրաստվելու է տախտակամած 2-րդ մասնաշենքի պարագծով 1 մ լայնությամբ, որը կատարելու է նաև պաշտպանիչ դեր: Ապամոնտաժվելու է ուսումնական 2-րդ մասնաշենքի թիթեղյա տանիքածածկն ու փայտյա կոնստրուկցիան:

3-րդ փուլում ապամոնտաժվելու է ճաշարանի մասնաշենքի թիթեղյա տանիքածածկն ու փայտյա կոնստրուկցիան:

Որոշակի քանակությամբ շինաղբ կուտակվելուց հետո այն տեղափոխվելու է Արենիի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայր: Քանդման արդյունքում առաջացող շինանյութը տարանջատվելու է: Պիտանի շինանյութը պահվելու է հատուկ հատկացված վայրում, իսկ շինաղբը տեղափոխվելու է աղբակույտ: Տարածքը մաքրվելու է շինաղբից:

Կրթահամալիրի կառուցապատման մակերեսը 2348,96 մ^2 է, կանաչապատման մակերեսը՝ 12905,25 մ^2:

Կրթահամալիրի շինությունը նախատեսվում է տեղադրել հողամասի կենտրոնական հատվածում: Հին դպրոցի մասնաշենքերից մեկը մինչև նոր մասնաշենքի կառուցումը պահպանվելու է: Նոր կառուցվող կրթահամալիրը դպրոցի հին մասնաշենքից գտնվում է 27 մետր հեռավորության վրա:

Կրթահամալիրի շուրջ տեղադրվելու են սիզամարգերով մայթեր: Կրթահամալիրի հարավային հատվածում նախատեսվել է 4,5 մետր լայնությամբ ճանապարհ: Ճանապարհին կից տեղադրվելու են նստարաններ, իսկ այգում լինելու է երկու զրուցարան, մեկը՝ մեծ, մյուսը՝ փոքր: Զրուցարանները նախատեսվում է իրականացնել մետաղական կոնստրուկցիաներով:

Մանկապարտեզին մոտ, հին և նոր դպրոցների միջև, տեղադրված է խաղահրապարակ, որն իր մեջ ներառում է տարբեր տարիքային երեխաների համար խաղասարքեր:

Կրթահամալիրի ցանկապատի եզրով՝ հարավ արևմտյան և հարավ արևելյան հատվածներով անցնում են երկու գյուղամիջյան ճանապարհներ, իսկ ցանկապատի հյուսիս արևմտյան մասը հարակից է մասնավոր տներին, հյուսիս արևելյան հատվածը՝ համայնքային նշանակության հողեր են: Մոտակա շինությունը ցանկապատից գտնվում է մոտ 12 մ հեռավորության վրա: Կրթահամալիրից ուղիղ գծով Երևան-Մեղրի Մ-2 միջպետական մայրուղուց հեռավորությունը կազմում է մոտ 160 մ:

Կրթահամալիրի տարածքում՝ արևմտյան մասում, գտնվում է Վահիկ Լևոնյանին նվիրված հուշարձանը, որը շինարարության ընթացքում չի ենթարկվելու որևէ ազդեցության և պատշաճ կերպով պահպանվելու է: Գոյություն ունեցող դպրոցի տարածքում առկա է մոտ 8 ծառ և թփեր, որոնք պահպանվելու են: Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է տարածքի արևմտյան մասում նախատեսված ոռոգման ջրի բաշխման հանգույցից, որտեղ ջրի ֆիլտրացումից հետո կատարվելու է ջրի

բաշխում ամբողջ տարածքում:

Հաշվետվությունում ներկայացված տեղեկությունների համաձայն՝ նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում պատմամշակութային և բնության հուշարձանների հետ:

Հարավային հատվածում՝ մուտքի աջակողմյան մասում, տեղադրվելու է կեղտաջրերի մաքրման կայան: Նախատեսվում է կառուցել նաև կոյուղու նոր գիծ: Կոյուղաջրերը հավաքվելու են տարածքի հարավային հատվածում գտնվող հորում, որտեղից ուղղվելու են դեպի մաքրման կայան: Մաքրված ջրերը ֆիլտրացում անցնելուց հետո հավաքվելու են մաքրված ջրի կուտակման և հեռացման հոր՝ որտեղից էլ հեռացվելու են դեպի ջրահեռացման առու: Կեղտաջրերի մաքրման համար նախատեսվել է «Տոպաս-15» տիպի մաքրման կայան:

Շինարարության տևողությունը կազմում է 24 ամիս:

Շինարարության ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատումն իրականացվելու է Արենիի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ տարածքի բարեկարգման և արդիականացման նախագծի համաձայն և Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ տարածքի բնակլիմայական պայմաններին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ: Կանաչապատման նպատակով տնկվելու է լորենի, թխկի, ակացիա, տույա, արծաթափայլ եղևնի, գիհի, ուռենի: Շահագործման փուլում կանաչ գոտու խնամքն իրականացնելու է դպրոցի տնօրինությունը:

Էլեկտրասնուցման արտաքին ցանցերի միացումները նախատեսվում են «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից, որոնք ներկայումս ապահովում են գոյություն ունեցող դպրոցի էլեկտրամատակարարումը: Էլեկտրական էներգիայի արտադրության, լուսավորության և ծախսերի փոխհատուցման նպատակով դպրոցի հյուսիս-արևելյան կողմում նախատեսվում է տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգ՝ 171,6 կՎտ պիկային հզորությամբ:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, մեքենաների անիվների լվացման, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու-կենցաղային նպատակների համար: Կենցաղային և խմելու նպատակներով նախատեսված ջուրը բերվելու է գործող դպրոցի ջրագծից, որը պատկանում է համայնքին և գտնվում է նոր կառուցվող դպրոցից մոտ 27 մ հեռավորության վրա:

Շինարարության ընթացքում իրականացվելու են շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

Շինարարության ընթացքում իրականացվող աշխատանքների արդյունքում օդային ավազանի և ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար նախատեսվել են անհրաժեշտ միջոցառումներ: Շինարարության ընթացքում շինարարական հրապարակը ցանկապատվելու է, շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվացվելու են հատուկ հարթակների վրա, ավազ, ցեմենտ, գաջ, խիճ, այլ սորուն նյութեր, հողային զանգվածներ,

շինարարական աղբ տեղափոխող տրանսպորտային միջոցները ծածկվելու են փոշու համար անթափանց ծածկոցներով, օդի դրական ջերմաստիճանի դեպքում պարբերաբար իրականացվելու է շինհրապարակի ջրցան՝ բացառելով կեղտաջրերի արտահոսքը շինարարական հրապարակի սահմաններից դուրս: Շինարարական նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորվելու են փակ տարածքներում կամ ծածկվելու են անթափանց թաղանթներով, շինարարական աղբը տեղափոխվելու է դրա համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով, իրականացվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի ստուգում և կարգավորում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնը մատակարարվելու է պատրաստի վիճակում բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված բետոնատար ավտոմեքենաներով:

Շինարարության փուլում, աղմուկի ազդեցությունը նվազեցնելու նպատակով, բոլոր շահագործվող մեքենաներն ապահովված են լինելու համապատասխան խլացուցիչներով, աշխատանքներն իրականացվելու են ցերեկային ժամերին, պահպանվելու են աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը: Իրականացվող բնապահպանական միջոցառումների արդյունքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով բացառվելու է շինանյութերի տեղադրումը հողային ծածկույթի վրա, ապահովվելու է շինտեխնիկայի և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ: Բուսահողի պահպանությունն իրականացվելու է Կառավարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան, շինաշխատանքների ավարտից հետո այն օգտագործվելու է բարեկարգման և կանաչապատման աշխատանքների համար:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնները (շինարարական աղբ, տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ և գրունտի մնացորդ) տեղափոխվելու են Արենիի համայնքապետարանի կողմից հատկացված համապատասխան վայրեր:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներին (հրդեհ, բնական աղետներ, անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ) արագ արձագանքելու նպատակով ՇՄԱԳ-ում նախատեսվել են կանխարգելիչ, ինչպես նաև հակահրդեհային միջոցառումներ:

Նախատեսվող գործունեության ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

1. մթնոլորտային օդի որակի մշտադիտարկումներ՝ փոշու և օդի այլ աղտոտիչների (CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական չափաքանակների պարբերական վերահսկում,
2. փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում դրական ջերմաստիճանի դեպքում՝ օրական 2 անգամ,
3. շահագործվող տեխնիկայի և տրանսպորտային միջոցների պարբերական ստուգումներ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,

4. շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակի մշտադիտարկումներ,

5. կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ կանաչապատ տարածքների հետագա խնամքի ապահովման նպատակով:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության գործընթացում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ազդակիր համայնքում (Արփի բնակավայր) անցկացվել է հանրային լսում, որի ընթացքում բնակիչները կողմ են արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ՝ նշելով դպրոցի կառուցման կարևորությունն իրենց համար: Շինարարության փուլում բացվելու են աշխատատեղեր և աշխատելու առաջնահերթությունը տրվելու է համայնքի բնակիչներին:

Նախաձեռնողը պարտավորվել է նաև շինարարության ընթացքում իրականացնել շրջակա միջավայրի վրա առաջացող բացասական ազդեցությունները բացառող կամ նվազագույնի հասցնող լրացուցիչ միջոցառումներ:

Նախատեսվող գործունեության ընթացքում մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված միջոցառումներն իրականացվելու են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջների պարտադիր կատարմամբ:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով հողի բերրի շերտի հետ կապված աշխատանքներն իրականացվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացվելու է «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ Օրենքով սահմանված կարգով պետական կառավարման մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել ընկերության կողմից հաշվետվությունը լրամշակելիս:

Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

Նոր դպրոցի կառուցումը հնարավորություն կտա աշակերտների ուսուցումը կազմակերպել ավելի որակյալ, անվտանգ՝ բարձր սեյսմակայունություն ունեցող, բարեկարգ, ժամանակակից չափորոշիչներով հագեցած շենքում:

Փորձաքննական պահանջներ

Կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հետևյալ փորձաքննական պահանջների կատարումը՝

1. շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակից դուրս փոշու տարածումը կանխարգելելու նպատակով առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով (շինարարական հրապարակի ցանկապատում, ջրցանում, շենքերի, շինությունների, սորուն նյութերի և հողային զանգվածների ծածկում անթափանց թաղանթով, շինարարական աղբի արագ տեղափոխում և այլն),

2. օդերևութաբանական անբարենպաստ պայմանների առաջացման դեպքում ապահովել լրացուցիչ միջոցառումների կիրառում,

3. շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացնել տարածքի կանաչապատում և բարեկարգում՝ Արենիի համայնքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի համաձայն՝ տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ՝ դրանց հետագա պարտադիր ոռոգմամբ և խնամքով՝ ապահովելով նախագծման թույլտվությունում և հաշվետվությունում ամրագրված կանաչապատման մակերեսը, խուսափել կենսունակ ծառերի հատումներ իրականացնելուց, անհրաժեշտության դեպքում ապահովել դրանց տեղափոխումը,

4. շինարարության ընթացքում առաջացող թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել «Թափոնների մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով (բացառել թափոնների և շինարարական աղբի կուտակումները հարակից տարածքներում),

5. ապահովել աղմուկի և թրթռումների մակարդակի վերահսկում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

6. ապահովել հաշվետվությամբ ներկայացված բոլոր բնապահպանական միջոցառումների իրականացումը (օդի որակ, հողային և ջրային ռեսուրսների պահպանություն, աղմուկի և թրթռումների մակարդակ, շահագործվող տեխնիկայի պատշաճ տեխնիկական վիճակ և այլն):

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մավ շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արփի բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Քրիստինե Հարությունյան